ՆԱԽԱՁԵՌՆՈՂ ԽՄԲԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

12.02.2018 22:32

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի նախագծի և մյուս օրենքների նախագծերի փաթեթում (**այսուհետ՝ Նախագիծ**) դատական տուգանքի վերաբերյալ դրույթները հանելու պահանջով փաստաբանները հայտարարել և 07.02.2018թ. իրականացրել էին մեկօրյա բողոքի ակցիա՝ այդ օրը հրաժարվելով Հայաստանի Հանրապետության պետական մարմիններում (այդ թվում՝ դատարաններում, նախաքննության մարմիններում) պաշտպանություն կամ ներկայացուցչություն իրականացնելուց:

Բողոքի ակցիայի շրջանակում 07.02.2018թ. փաստաբանները՝

1. պահանջել են ՀՀ Ազգային ժողովից թույլ չտալ սահմանադրական օրենքի խախտմամբ ներկայացված Նախագծի ընդունումը.

2. հայտարարել են, որ փաստաբանները բողոքի ակցիա են իրականացնելու 2018 թվականի փետրվարի 8-ին, ինչպես նաև 2018 թվականի փետրվարի 14-ին, 15-ին և 16-ին.

3. առաջարկել են ՀՀ Ազգային ժողովի նախագահին՝ Նախագծի քննարկման նիստին հրավիրել փաստաբանների ներկայացուցչին և ելույթ ունենալու հնարավորություն տալ:

2018թ. փետրվարի 8-ին նույնպես փաստաբաններն իրականացրել են բողոքի ակցիա:

Փաստաբանների նախաձեռնող խմբի ներկայացուցիչներն այդ օրերին հանդիպել են Ազգային ժողովի խմբակցությունների պատգամավորներին՝ վերջիններիս ներկայացնելով փաստաբանների պահանջները և հիմնավորումները:

Ազգային ժողովի նիստում Նախագծի քննարկման ժամանակ, իրենց ելույթներում փաստաբանների կողմից ներկայացված խնդրի մասին ամբիոնից իրենց մտահոգությունները հայտնել են «Ծառուկյան», «Ելք» և «Հայ Յեղափոխական Դաշնակցություն» խմբակցությունների պատգամավորները:

2018 թվականի փետրվարի 9-ին ՀՀ Ազգային ժողովը 59 կողմ, 25 դեմ, 10 ձեռնպահ ձայներով ընդունել է փաստաբանների նկատմամբ դատական տուգանք սահմանող նորմեր պարունակող ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրքն՝ իր փաթեթով:

2018թ. փետրվարի 9-ին Նախաձեռնող խումբը հայտարարել է, որ փաստաբանների հետ 2018թ. փետրվարի 12-ին, ժամը 18:30-ին քննարկում է անցկացնելու՝ հետագա գործողությունները որոշելու համար:

2018թ. փետրվարի 12-ին ՀՀ արդարադատության նախարարը հրապարակավ հայտնել է, որ՝ «*... եթե փաստաբանները կարծում են, որ այս դատական սանկցիայի կիրառման ընթացքում կարող են առաջանալ որոշակի ռիսկեր և իրենց պատկերացմամբ կան դրանք չեզոքացնելու հավելյալ միջոցներ կամ հնարավորություններ, Արդարադատության նախարարությունը պատրաստ է լսել նրանց մոտեցումներն ու փաստարկները: Ներկայումս մենք աշխատում ենք փաստաբանության մասին օրենքում փոփոխություններ կատարելու նախագծի վրա ու կարծում եմ, որ այդ գործընթացի շրջանակում կարող ենք քննարկել փաստաբաններին հուզող այս և մնացած խնդիրները:*»:

2018թ. փետրվարի 12-ի քննարկման ժամանակ, նախաձեռնող խմբի անդամները նշել են, որ Նախագիծն ընդունվել է «ԱԺ կանոնակարգ» ՀՀ սահմանադրական օրենքի 65-րդ հոդվածի 2-րդ մասի և 69-րդ հոդվածի 1-ին մասի պահանջների խախտմամբ, քանի որ Նախագծի փաթեթում ընդգրկված լրացուցիչ 8 օրենքների նախագծերին

երկրորդ ընթերցումից առաջ ավելացվել են 2 նոր նախագծերը՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում և ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքների նախագծերը, որոնք փաստացի ընդունվել են մեկ ընթերցմամբ:

Այս և մյուս հիմնավորումները, ինչպես նաև օրենսդրական փաթեթի՝ փաստաբանների նկատմամբ դատական տուգանք կիրառելու նորմերը 2019 թվականի հունվարի 1-ից հետո կիրառելու պայմանը հաշվի առնելով, Նախաձեռնող խումբը քննարկմանը ներկա փաստաբաններին առաջարկել է Նախագծի վիճարկման հետևյալ ճանապարհը, մասնավորապես՝ ներկայացնել դիմում ՀՀ Նախագահին ընդունված օրենքները չստորագրելու վերաբերյալ, ներկայացնել դիմում մարդու իրավունքների պաշտպանին օրենքներն ուժի մեջ մտնելուց հետո՝ դրանց սահմանադրականության հարցը բարձրացնելու մասին, քննարկել ՄԻԵԴ-ին դիմելու հնարավորության հարցը:

Նախաձեռնող խումբն առաջարկել է ընդունել նաև Արդարադատության նախարարության՝ երկխոսության առաջարկը, քանի որ այն չի խոչընդոտում նախաձեռնող խմբի վերոհիշյալ գործողություններին, ինչպես նաև հնարավորություն է ստեղծում բարելավել ընդունված օրինագծի փաթեթի՝ փաստաբաններին վերաբերող իրավակարգավորումները:

Ելնելով վերոգրյալից,

հաշվի առնելով ՀՀ արդարադատության նախարարության՝ քննարկումներով խնդիրը լուծելու առաջարկը,

նկատի ունենալով այն, որ բողոքի ակցիաները հիմնականում ուղղված էին ՀՀ Ազգային ժողովին, որն իր որոշումն արդեն ընդունել է,

Նախաձեռնող խումբը՝

1. Հայտարարում է, որ շարունակելու է ՀՀ Ազգային ժողովի կողմից սահմանադրական օրենքի խախտմամբ ընդունված Նախագծի փաթեթի վիճարկման հետ կապված գործողությունները, այդ թվում՝ ներկայացվելու է դիմում ՀՀ Նախագահին՝ ընդունված օրենքները չստորագրելու վերաբերյալ, ներկայացվելու է դիմում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին նշված օրենքների սահմանադրականությունը վիճարկելու վերաբերյալ, ինչպես նաև քննարկվելու է մինչև օրենքների կիրառումը ՄԻԵԴ-ին դիմելու հնարավորության հարցը:

2. 2018 թվականի փետրվարի 14-ին, 15-ին և 16-ին հայտարարված բողոքի ակցիաները հետաձգում է:

3. Որպես խնդրի լուծման զուգահեռ միջոց ՀՀ արդարադատության նախարարության հետ քննարկելու է դատական տուգանքը փաստաբանների նկատմամբ կիրառելու հնարավորությունը նախատեսող նորմերում՝ փաստաբանի մասնագիտական գործունեության անկախության երաշխիքները (այդ թվում՝ գործը քննող դատավորի կողմից փաստաբանի նկատմամբ տուգանք կիրառելու անթույլատրելիությունը) սահմանելու հարցը:

Նախաձեռնող խումբ

ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՄԱՄՈՒԼԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ
PRESS SERVICE OF CHAMBER OF ADVOCATES OF RA

Առաջարկվող նորություններ

17.01.2018ԲԱՋՄԱԹԻՎ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐ ՊԱՀԱՆՋ ԵՆ ՆԵՐԿԱՅԱՑՐԵԼ ԱՋԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻՆ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆԸ

18.01.2018ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀԸ ԳՐՈՒԹՅՈՒՆ Է ՀՂԵԼ ԱՋԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻՆ

18.01.2018
ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆԸ ՄԻԱՑԵԼ Է 907 ՓԱՍՏԱԲԱՆ

19.01.2018
ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆԸ ՄԻԱՑԵԼ Է 1110 ՓԱՍՏԱԲԱՆ

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })